

Ա Վ Ա Ն Դ Ի Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Բ Թ Ի Վ _____
“Բ Ա Ր Ե Կ Ե Ց Ի Կ Ա Պ Ա Գ Ա”

Ք. _____ " ____ " _____ 20__ թ.



“Կոնվերս Բանկ” փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 13.09.1996թ. թիվ 5 որոշմամբ, գրանցման համար 57, վկայական թիվ 0164, հասցե՝ ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյան փողոց 26/1), (այսուհետ՝ “Բանկ”), ի դեմս _____, որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____, (այսուհետ՝ “Ավանդատու”), ի դեմս _____, որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով “Կողմեր”, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և պայմանները

1.1. Պայմանագրով Բանկը Ավանդատուից ստացված Ավանդը ներգրավում է Պայմանագրով սահմանված պայմաններով և պարտավորվում է Պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով վերադարձնել Ավանդատուին և վճարել Պայմանագրով նախատեսված տոկոսները: Ավանդատուն իրավունք ունի Պայմանագրով սահմանված կարգով Բանկային ավանդին ավելացնել գումարներ:

1.2. Պայմանները՝

Հաշվի համար	_____		
Գումար /նախնական ներդրված/ և արժույթ	_____ / _____ / _____		
Ժամկետը ▪ Կուտակման ժամկետ՝ ▪ Բաշխման ժամկետ / կարող է լրացվել կուտակման ժամկետի ավարտից հետո /	// , որն ավարտվում է " ____ " _____ 20__ թ.-ին // , որն ավարտվում է " ____ " _____ 20__ թ.-ին		
Ավանդի ժամկետ՝ /կարող է լրացվել կուտակման ժամկետի ավարտից հետո/	Կուտակման ժամկետ + Բաշխման ժամկետ, որն ավարտվում է " ____ " _____ 20__ թ.-ին		
Հօգուտ <i>Հաստատվում է միայն ավանդատուի ստորագրությամբ</i>	<input type="checkbox"/> _____, <i>/երրորդ անձի անուն, ազգանուն, հայրանունը / / անձնագրի տվյալներ /</i> այսուհետ՝ Երրորդ անձ Ավանդատու _____		
Հաշվարկվող տարեկան տոկոսադրույթ	<input type="checkbox"/> ԿԲՀՏ*	<input type="checkbox"/> ԿԲՀՏ գումարած _____/_____/տոկոս	<input type="checkbox"/> ԿԲՀՏ հանած _____/_____/ տոկոս
Ավանդային հաշվից Քաղվածքները, տեղեկատվական ամփոփագիրը և այլ տվյալներ տրամադրվում են	<input type="checkbox"/> Էլեկտրոնային եղանակով՝ <input type="checkbox"/> Հաճախորդի _____ էլեկտրոնային հասցեին	Բանկի տարածքում՝ առձեռն	<input type="checkbox"/> փոստով՝ Հաճախորդի _____ հասցեով
	<input type="checkbox"/> Էլեկտրոնային եղանակով՝ Ինտերնետ-Բանկ համակարգով	այլ եղանակով, այն է՝ _____	
Ավանդի գումարին ամսական պարբերականությամբ ավելացվող գումարի չափը՝			

 ConverseBank Բոլորի համար		“ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ” ՓԲԸ		FO 75-47-04
		Ավանդային պայմանագիր “Բ Ա Ր Ե Կ Ե Ց Ի Կ Ա Պ Ա Գ Ա”		Խմբագրություն 2

Գումար /առավելագույնը՝ 100,000 ՀՀ դրամ կամ 300 ԱՄՆ դոլար/	_____ / _____ / _____
---	-----------------------

Բանկային հաշիվ, որից գումարները պետք է ուղղվեն Ավանդի գումարի ավելացմանը	_____
---	-------

Ավանդի գումարի վճարման կարգը ավանդը մարվելիս

- Մուտքագրել _____ հաշվի համարին
- Վերադարձնել ավանդի ողջ գումարը և հաշվարկված տոկոսները կուտակման ժամկետի ավարտին
- Վերադարձնել ավանդի գումարը հավասարաչափ բաշխումով մինչև բաշխման ժամկետի ավարտը հետևյալ պարբերականությամբ
- եռամսյակային
- կիսամյակային
- տարեկան



Երկարաձգել կուտակման ժամկետը՝ ըստ սույն պայմանագրի պայմանների և երկարաձգման պահին Բանկում գործող տոկոսադրույքի

Ավանդի երկարաձգման ժամկետը	/ _____ / , որն ավարտվում է " ____ " _____ 20__թ.-ին /այսուհետ՝ Ժամկետի ավարտ /
-----------------------------------	---

* Պայմանագրում օգտագործվող ԿԲՀՏ արտահայտությունը նշանակում է Կոնվերս Բանկի հաշվարկային տոկոսադրույք, որը տեղադրվում է Կոնվերս Բանկ՝ ՓԲԸ-ի ինտերնետային կայքում, ինչպես նաև Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում տեղադրված ցուցանակներում:

2. Տոկոսների հաշվարկման և վճարման կարգը

- 2.1. Ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են Ավանդային հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ Ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը: Ավանդի նկատմամբ կուտակված տոկոսները հաշվեգրվում են ավանդային հաշվին տարեկան պարբերականությամբ:
- 2.2. Տոկոսագումարները Ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված համապատասխան արժույթի առթի փոխարժեքով:
- 2.3. Ավանդատուի կողմից Ավանդի գումարը մինչև Ժամկետի ավարտը՝ Ավանդի ներդրման պահից 1 տարվա ընթացքում պահանջվելու դեպքում Բանկը Ավանդատուին Պայմանագրի 1.2 կետում նշված տոկոսագումարի փոխարեն վճարում է Բանկում ցպահանջ ավանդի համար սահմանված տոկոսադրույքով՝ կատարելով վերահաշվարկ: Բաշխման ժամկետում Ավանդի գումարը պահանջվելու դեպքում վերահաշվարկ չի կատարվում:
 Մեկ տարուց հետո մինչև Ժամկետի ավարտն ավանդի գումարը պահանջվելու դեպքում, Բանկը վերահաշվարկում է նախորդ մեկ տարվա ընթացքում կուտակված և վճարված տոկոսները Բանկում այդ պահին գործող ցպահանջ ավանդի տոկոսադրույքով: Մինչև նախորդ մեկ տարին սկսելու վերջին օրը հաշվարկված և հաշվեգրված տոկոսների մասով վերահաշվարկ չի կատարվում:
- 2.4. Ավանդատուի կողմից Ավանդային հաշվով գործառնություններ չեն իրականացվում, բացառությամբ Ավանդի գումարի ավելացման գործառնությունների /եթե Ավանդը ներգրավված է Ավանդի գումարը Ավանդատուի կողմից ավելացվելու իրավունքով /:
- 2.5. Հաշվարկներում օգտագործվող տարվա օրերի քանակը ընդունվում է օրացուցային, իսկ որպես բաժանարար՝ 365(նահանջ տարվա դեպքում բաժանարարը հավասարեցվում է 366-ի):
- 2.6. Ավելացված գումարների նկատմամբ հաշվարկվում է Պայմանագրի 1.2 կետում նշված տոկոսադրույքը, բացառությամբ Ժամկետի ավարտից 30 օր առաջ ավելացված գումարների, որոնց նկատմամբ հաշվարկվում է Բանկում ցպահանջ

	<p align="center">“ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ” ՓԲԸ</p>	<p align="center">FO 75-47-04</p>	
	<p align="center">Ավանդային պայմանագիր “Բ Ա Ր Ե Կ Ե Ց Ի Կ Ա Պ Ա Գ Ա”</p>	<p align="center"><i>Խմբագրություն 2</i></p>	<p align="center"><i>3/7</i></p>

ավանդի համար սահմանված տոկոսադրույքը, եթե այդ գումարները զգալիորեն գերազանցում են ավանդատուի կողմից ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ավելացված գումարները:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Բանկն իրավունք ունի՝

3.1.1. ինքնուրույնաբար տնօրինել Ավանդի գումարը:

3.2. Բանկը պարտավոր է՝

3.2.1. պահպանել Պայմանագրի գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

3.2.2. Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պահից 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում Ավանդատուի պահանջով Ավանդի գումարը և հավելագրված տոկոսագումարները վճարել Ավանդատուին,

3.2.3. երեսուրյա պարբերականությամբ Ավանդատուին տրամադրել Ավանդային հաշվի քաղվածք, բացառությամբ այն դեպքերի, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

3.2.4. տեղեկացնել Ավանդատուին Բանկի ներքին ակտերի ցանկացած այնպիսի փոփոխության մասին, որը կհանգեցնի տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխմանը, համապատասխան փոփոխության օրվանից առնվազն 15 օր առաջ:

3.2.5. Պայմանագրի 3.2.3 և 3.2.4 ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը համարվում է Ավանդատուին տրամադրված այն վերջինիս փոստային/էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ Բանկի տարածքում վերջինիս համար այն հասանելի դառնալու պահից, անկախ այն հանգամանքից, թե Ավանդատուն փաստացի երբ է ստանում այդ տեղեկատվությունը:

3.3. Ավանդատուն իրավունք ունի՝

3.3.1. Բանկից պահանջել վերադարձնել Ավանդի գումարը և վճարել տոկոսներ՝ Պայմանագրով սահմանված չափերով և կարգով:

3.4. Ավանդատուն պարտավոր է՝

3.4.1. Պայմանագիրը կամ բանկային գրքույկը կորցնելու, հասցեի փոփոխության, անձնագրի կորստի կամ փոփոխության դեպքերում անհապաղ գրավոր տեղյակ պահել Բանկին,

3.4.2. Ավանդը և/կամ տոկոսագումարները ստանալու համար Բանկ ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, Պայմանագրով կամ բանկային գրքույկով:

4. Հատուկ դրույթներ

4.1. Եթե Ավանդը ներդրված է հօգուտ Երրորդ անձի, ապա վերջինս Ավանդատուի իրավունքներ ձեռք է բերում անձը հաստատող փաստաթղթով Բանկ անձամբ ներկայանալու և Ավանդատուի իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը ներկայացնելու պահից: Մինչ այդ Ավանդատուն կարող է օգտվել Ավանդի հաշվում իր մուծած դրամական միջոցների Ավանդատուի իրավունքներից:

4.2. Եթե Պայմանագրով որպես Ավանդատու հանդես են գալիս մեկից ավելի անձինք, Ավանդի և տոկոսագումարների վճարումները Բանկի կողմից կատարվում են բոլոր Ավանդատուներից ստորագրություն վերցնելով: Ավանդատուներից մեկի կողմից գումարները ստանալու դեպքում վերջինս Բանկին պետք է ներկայացնի մյուս Ավանդատուների կողմից տրված լիազորագիր՝ վավերացված նոտարական կարգով:

4.3. Եթե Ավանդը ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն սույնով հավաստում է, որ Պայմանագիրը կնքելու պահին գիտակցել և ընդունել է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով հնարավոր ռիսկերը:



5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

6. Այլ դրույթներ

6.1. Ավանդի վերադարձն ապահովված է Բանկին սեփականության իրավունքով պատկանող գույքով: Ավանդների հատուցման չափերը, կարգն ու պայմանները մանրամասն նկարագրված են Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 Հավելվածում:

6.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ավանդի ներգրավման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

		“ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ” ՓԲԸ		FO 75-47-04
		Ավանդային պայմանագիր “Բ Ա Ր Ե Կ Ե Ց Ի Կ Ա Պ Ա Գ Ա”		Խմբագրություն 2

- 6.3. Պայմանագրից բխող ծանուցումները պետք է լինեն գրավոր ձևով, որոնք պետք է ուղարկվեն Պայմանագրի 7-րդ հոդվածում նշված հասցեներով, իսկ վերջիններս փոփոխման դեպքում՝ փոփոխված հասցեներով:
- 6.4. Ավանդատունսույնով հավաստում է, որ Պայմանագիրը կնքելիս ինքը ստացել է տեղեկատվական ամփոփագիրը, ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման պայմաններին, ընդունում է դրանք և պարտավորվում կատարել դրանցով նախատեսված պահանջները:
- հիմնական պայմանները, Բանկը մատչելի լեզվով, առանց խրթին ձևակերպումների և լիարժեք կերպով Ավանդատուին ներկայացրել է ավանդի ներգրավման էական պայմանները, Բանկի և Ավանդատուի հաղորդակցման հնարավորությունները, Բանկին պահանջների ներկայացման և Ավանդատուի իրավունքների պաշտպանության կարգը, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 8/05-ով սահմանված բոլոր այլ տեղեկությունները, իսկ Ավանդատուն հասկացել է դրանց էությունը:
- Ավանդատուն նաև հավաստիացնում է, որ իր կողմից Բանկին տրամադրված տեղեկությունները արժանահավաստ և ճիշտ են և պարտավորվում է դրանց ցանկացած փոփոխության դեպքում անհապաղ ծանուցել Բանկին:
- 6.5. Պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:
- Բանկը տեղեկացնում է, որ կնքել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով չվիճարկելու համաձայնագիր այն պահանջներով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի գումարի ընդհանուր չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:
- 6.6. Պայմանագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել նույն կարգով, ինչ կարգով որ կնքված է Պայմանագիրը:
- 6.7. Պայմանագիրը կնքված է 2/երկու/ հավասարազոր օրինակներով: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԲԱՆԿ

“Կոնվերս Բանկ” ՓԲԸ
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 Վազգեն Սարգսյան 26/1

ԱՎԱՆԴԱՏՈՒ

Կ.Տ.

Կ.Տ.



Հավելված 1

“Կոնվերս Բանկ” ՓԲԸ և _____ միջև

_____ 20__թ. կնքված թիվ _____

Ժամկետային ավանդի պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՎԱՆՂԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1. Երաշխավորված ավանդի չափը

- ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ՝ ապա երաշխավորված ավանդի չափը 4 /չորս/ միլիոն հայկական դրամ է.
- բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ՝ ապա երաշխավորված ավանդի չափը 2 /երկու/ միլիոն հայկական դրամ է.
- գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ՝ և դրամային բանկային ավանդի գումարը 2 /երկու/ միլիոն հայկական դրամից ավելի է՝ ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 4 /չորս/ միլիոն հայկական դրամով .
- դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ՝ և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է 2 /երկու/ միլիոն հայկական դրամից՝ ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ 2 /երկու/ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով .

2. Չերաշխավորված ավանդներ

- ա) որը պատկանում է տվյալ բանկի ղեկավարին և (կամ) նրա ընտանիքի անդամներին .
- բ) որը պատկանում է տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին և /կամ/ նրա ընտանիքի անդամներին
- գ) որի սեփականատերը /համասեփականատերը/ հրաժարվել է իր մասին նկատմամբ սեփականության իրավունքից
- դ) որն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց՝ քանի դեռ դրա սեփականատերը հակառակը չի ապացուցել
- ե) որը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքը առնվազն 1<5 անգամ գերազանցող տոկոսադրույքով՝

3. Երաշխավորված Չերաշխավորված



Երաշխավորված ավանդների հատուցման դեպք /այսուհետ՝ հատուցման դեպք է համարվում “Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ կամ սնանկ ճանաչելը՝ և եթե բանկը /այսուհետ՝ անվճարունակ բանկ/ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ ի վիճակի չէ օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում վերադարձնել ավանդները.
Բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելը ի վիճակի չլինելու մասին որոշումը Կենտրոնական թանկի խորհուրդը կայացնում է այդ փաստը բացահայտելուց մեկ շաբաթվա ընթացքում և

4. Երաշխավորված ավանդների հատուցողը

Երաշխավորված ավանդների հատուցումն իրականացվում է հատուկ ստեղծված հիմնադրամի միջոցով, որը հանդիսանում է ՀՀ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ, և որի հիմնադիրը ՀՀ կենտրոնական բանկն է /ք.Երևան, Վ. Սարգսյան 6, հեռ. 583841/:

5. Երաշխավորված ավանդների հատուցման կարգը

Երաշխավորված ավանդների հատուցումն սկսվում է հիմնադրամի կողմից հայտարարության հրապարակմամբ /մամուլում կամ լրատվական այլ միջոցներով/, որտեղ նշվում են.
ա/ հատուցումը փաստացի կատարող բանկի անվանումը



		<p align="center">“ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ” ՓԲԸ</p>	<p align="center">FO 75-47-04</p>	
		<p align="center">Ավանդային պայմանագիր “Բ Ա Ր Ե Կ Ե Ց Ի Կ Ա Պ Ա Գ Ա”</p>	<p align="center"><i>Խմբագրություն 2</i></p>	<p align="center"><i>6/7</i></p>

բ/ երաշխավորված ավանդն ստանալու կարգը /ներառյալ անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկը, պայմանները, վայրը, եղանակները, ժամկետները /:

6. Սույն ծանուցումը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է Ավանդատուին:
Ծանուցմանը ծանոթացել եմ

Ավանդատու՝

_____ / ստորագրություն / _____ /անուն, ազգանուն /

 ConverseBank Բոլորի համար		“ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ” ՓԲԸ		FO 75-47-04
		Ավանդային պայմանագիր “Բ Ա Ր Ե Կ Ե Ց Ի Կ Ա Պ Ա Գ Ա”		<i>Խմբագրություն 2</i>

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Տեղեկացնում ենք, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին ՀՀ օրենքի համաձայն դուք կարող եք Կոնվերս Բանկ ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների և տասը միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արժույթով գումարը չգերազանցելու գույքային պահանջ ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը: